կեալս[h], *եւ այլդ՝ նոյնպիսի։* 39 *Բայց հաւանեալ եմ զարանցն Պտղոմ[ե]ա[յ]*[1], *որք շուրջ եկին զԱյրեցեալ գաւառաւն եւ զազգսն*[2] *շուրջ գրեցին ճշդիւ*[3] *եւ զսահմանս ճարակաց նոցա՝ չափե[ա]լ յԱկիսիմբա[յ], եւ զԼուսնի լեառն եւ անդր եւս՝ Անծանաւթ երկիր, եւ շրջեալ առ Անծանաւթ երկր$^{ե}$աւ*[4]՝ *յՈվկիանոսէ մինչեւ յՈվկիանոս, եւ զեւս առաւելն լռեցին, զոր ոչ կոխեաց ոտն մարդոյ։*
40 *Ըստ որում* [4բ] *ասի ի Յոբն, թէ՝* Զգեաց զհիւսիսի զոչնչիւ[5][i], *եւ թէ՝* Հրամանն պահեաց[6] զերեսաւք ջուրց[j], *այսինքն թէ՝ Աստուծոյ հրամանն բաւական է ունել զեզեր ջրոյն Անծանաւթ ծովու՝ ոչ պիտոյացեալ երկրի, եւ զեզեր*[7] *սպառուածի Անծանաւթ երկրի՝ ոչ պիտո[յ]ացեալ ջրոյ։*
41 *Բայց եթէ շուրջ զԱնծանաւթ երկր$^{ե}$աւ*[8] *ծով եւ շուրջ զԱնծանաւթ ծովով երկիր՝ մեք որպէս զանծանաւթեալ լռեմք, եւ գրեմք միայն՝ զոր ետես ական եւ կոխեաց ոտն մարդոյ։* 42 *Եւ զառաւելսն հրամանին Աստուածային*[9] *վարկանիմք հաւատովք, որպէս ի վերայ երկրի՝ զոր տեսանեմք, նոյնպէս եւ ի ներքո[յ] երկրի, ըստ Յոբայ, եթէ՝* Զերկիր ի վերայ ոչընչի հաստատեաց[k]. *զոր եւ Լուսաւորիչն հաստատէ՝ ի վերայ ոչընչի կառուցեալ զերկիր. եւ զբան Սաղմոսին, որ ասէ՝* Ի վերայ ծովու հիմունս արկ նմա եւ ի վերայ գետոց պատրաստեաց զնա[l]՝ *վարկանիմք ծակ*[10] *ի միմեանս ծովուցդ, ըստ*[11] *սրբոյն Բարսղի. եւ ընդ ամենայն հիմունս երկրի ջուրց ունել*[12], *ըստ այնմ, թէ՝* Խորք որպէս զգեստ վերարկու է նորա[m]։
43 *Եւ որպէս Աստուածաբան*[13] *ասէ, «Խորշք ծովա[յ]ինք՝ ընդ երկիր եւ ընդ միմեանս միաւորեալք»։*

## 1 [Բ.] [**Աշխարհագիր. Հատած Երկրորդ**][14]

2 *Արդ*[15]՝ *սկսցուք ըստ Պապա[յ] Աղէքսանդր*[5ա]*աց[ւ]ոյ*[16] *«Երկրագրութեան», որ ըստ ինքնագիր բոլորակին Կղաւդիու Պ[տ]ղոմեա[յ]*[17] *«Տիեզերագրութեանցն չափուց», զոր սկսեալ յԱյրեալ գաւտ[ւ]ոյն*[18]՝ *կրկնակի ի հիւսիսի եւ ի հարաւ։*

3 [19]*Եւ* ˈ*Այրեալ*[20] *գաւտին սկսանի յԱնծանաւթ յերկրէ Սի[ւ]նէաց[ւ]ոց*[21], *անցանելով ըստ*

---

h **Առակ. Ը** *26*

1 *V* Պտլոմա, *S* Պտլոմեայ *փխ* Պտղոմ[ե]ա[յ] *(վեր. ըստ այլոց. օր.՝ Ա.30, Բ. 33, 37, Դ.33, Ե.206. մէկ տեղում այս գրչական ձեւը կրկնուում է)*

2 *S* զաղդսն *փխ* զազգսն *(V)*

3 *V* ճժդիւ *փխ* ճշդիւ *(վեր. Սուքրեանի. գուցէ, կարելի է վերականգնելի համարել ուղղակի* ճշտիւ*)*

4 *VS* երկրեաւ *փխ* երկր$^{ե}$աւ *(վեր.՝ ըստ յաջորդների, տե՛ս նախ. Բ.17, Դ.45, Ե.2, 76 եւն)*

5 *S* զոչընչիւ *փխ* զոչնչիւ *(V. թէպէտ քիչ անց՝ նախ. Ա.42-ում զոյգ* **ը** *է պահպանուել, որ սղում ենք)*

i **Յոբ, ԻԶ** *7*

6 *S* պատեաց *փխ* պահեաց *(V)*

j **Հմմտ. Յոբ, ԻԶ** *10*

7 *S* զեզերս *փխ* զեզեր *(V)*

8 *VS* երկրեաւ *փխ* երկր$^{ե}$աւ *(վեր.՝ ըստ յաջորդների, օր.՝ նախ. Բ.17, Դ.45, Ե.2, 76 եւն)*

9 *S* Աստուծոյ *փխ* Աստուածային *(V. գրիչը նախ գրել է* Ա̅յ, *ապա վերեւում ուղղում տուել՝* ային*)*

k **Հմմտ. Յոբ, ԻԶ** *7*

l **Սաղմ. ԻԳ(ԻԴ)** *3*

10 *V* ծագ, *S* ծակիլ *փխ* ծակ *(վեր., Սուքրեանը տողատակում ծանօթագրել է.* «Յօր. *ծագ ի միմեանս*, եղաք ըստ օրինակին Վեցօրէիցն Ս. Բարսղի». *հմմտ. բարբառային* **կ** → **գ** → **կ***)*

11 *S* ընդ *փխ* ըստ *(V)*

12 *V* անել *փխ* ունել *(վեր. Սուքրեանի՝ ըստ Ա.40)*

m **Սաղմ. ՃԳ(ՃԴ)** *6*

13 *S* Աստուածաբանն *փխ* Աստուածաբան *(V)*

14 *VS չիք* Աշխարհագիր. Հատած Երկրորդ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, ուր, սակայն, այս գլխագիրը մի քանի պարբերութիւն վրիպմամբ յետ է տարուած ու դրուած՝* «Քանզի զՅունականաւն եւ զԿասբիցն...» *նախադասութիւնից առաջ. տե՛ս վերեւում՝ նախ. Ա.31-ի ծնթ.)*

15 *V-ի* Ա-*ն կարմիր գլխատառով է (պարբ-ն նշան)*

16 *V* Աղէքսանդրացոյ, *S* Աղեքսանդրացոյ *փխ* Աղէքսանդրաց[ւ]ոյ *(վեր.՝ ըստ Բ.30, Գ.54, Ե.324)*

17 *V* Կղաւդիսւ Պղոմեա *[***Պղ***-ի վերեւում գրչի դրած ուղղման կայծակնաձեւ նշանով]*, *S* Կղաւդեայ Պտղոմեայ *փխ* Կղաւդիու Պտղոմեա[յ] *(վեր. ըստ յաջորդի, տե՛ս Ե.79 եւ հմմտ բոլորագիր* **ո** → **ս***)*

18 *VS* գօտոյն *փխ* գաւտ[ւ]ոյն *(վեր.՝ ըստ յաջորդների, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

19 *Երեմեանը վերակ-նում է վերնագիր՝* «Յաղագս Այրեալ գաւտւոյն». *համառօտում՝* Բայց *փխն.* Եւ

20 *V* յԱյրեալ *փխ* Այրեալ *(վեր. Սուքրեանի)*

21 *VS* Սինէացոց *փխ* Սի[ւ]նէաց[ւ]ոց *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324 եւ Ե.298, 306, 336. համառօտում ամենուր* Սինէացւոց *է)*